**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Կենտրոն, Սահմանադրության հրապարակ1
Հեռ. (0223)2-23-45 հեռ./ֆաքս (060)704010
14 մարտ 2023 թ. N 445

**«ՆԷԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի**
**ՏՆՕՐԵՆ Ն.ՍԱՐԳՍՅԱՆԻՆ**

Հարգելի՝ պարոն Սարգսյան

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի կարիքների համար սույն թվականի հունվարի 19-ին «ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/06» ծածկագրով հայտարարվել էր էլեկտրոնային աճուրդ՝ «Շինանյութի» ձեռքբերման նպատակով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 58-րդ կետը, համայնքի ավագանու սույն թվականի մարտի 10-ի N 54 որոշմամբ, «ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/06» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին չափաբաժինը /ցինկապատ թիթեղ/ համարել չկայացած՝ տեխնիկական բնութագրի չափման միավորի անհամապատասխանության հիմքով:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

Ֆինանսատնտեսագիտական և գնումների
բաժնի պետ՝ Ա. Եփրեմյան
Կատարող՝ Ք. Բաղդասարյան
Հեռ. (060) 70-40-21